ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

4003 գ. Ազատամուտ Լ.Աղբալյան փ. 2 Հեռախոս /+374 77/ 45 65 26

Էլ. փոստ /azatamutschool@mail.ru/

№ 54 «16» 11 2020թ

«ԷՍ ԸՆԴ Է» ՍՊԸ-ի

տնօրեն Լ. Հակոբյանին

Հարգելի Լ. Հակոբյան,

«Ազատամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի և Ձեր միջև կնքված 10.02.2020թ. կնքվել է «Ազատամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման ՀՀՏՄԱՀ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-1 պայմանագիրը /այսուհետ՝ պայմանագիր/:

Պայմանագրի 7-րդ կետը սահմանում է, «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Ազատամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով պայմանագրի 7-րդ կետը, 2020թ. նոյեմբերի 16-ին միակողմանի լուծելու է ՀՀ ՏՄԱՀ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-1 պայմանագիրը:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Լ. Ավետիսյան

Сканировано с CamScanner